ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

Նախաբան.....3

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը.....4

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները 6

Առաջարկություն 9

Հղումներ 10

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 11-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) 2017 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացրած գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների, իր պաշտոնական կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել է 2017 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:

Համաձայն հրապարակված գնումների պլանի, ընկերությունը 2017 թվականին պլանավորել է իրականացնել 1 253,9 մլն դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր արժեքով գնումների 88 գործարք՝ 9 ուղղություններով, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

№	Գնման առարկա	Գնումների պլանավորված արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում (%)
1	2	3	4
1	Վերանորոգման ծախսեր	373,7	30%
2	Հիմնական գործունեության ծախսեր, կապված էլեկտրաէներգիայի և հզորության իրացման հետ	271,0	22%
3	Ադմինիստրատիվ տնտեսական ծախսեր	130,0	10%
4	Ապահովագրական ծախսեր	118,1	9%
5	Շենքերի, կառույցների և սարքավորումների շահագործման ծախսեր	54,0	4%
6	Խորհրդատվական ծախսեր	35,0	3%
7	Տեխնիկական վերակառուցման և վերազինման ծախսեր	23,9	2%
8	Իրավաբանական ծառայությունների ձեռքբերման ծախսեր	14,5	1%
9	Այլ ոչ ֆունկցիոնալ ծախսեր	233,7	19%
	Ընդամենը	**1 253,9**	**100%**

Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2017թ.)
1	2	3	4	5
1	Բաց մրցույթ	21	535,1	հունվար-սեպտեմբեր
2	Միակ աղբյուր	4	457,0	հունվար
3	Չկանոնակարգված գնումներ	62	247,3	հունվար-նոյեմբեր
4	Առաջարկների բաց հարցում	1	14,5	հունվար
	Ընդամենը	**88**	**1 253,9**	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնումների սկզբնական պլանավորված արժեքը՝ մլն դրամ (առանց ԱԱՀ)

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Գնումների պլանի մոնիթորինգի շրջանակում հանձնաժողովի աշխատակազմն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակված «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների կարգը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կայքում տեղադրված գնումների կարգում առկա են հղումներ չգործող օրենքներին և որոշումներին, մասնավորապես.

1. գնումների կարգի հավելված №4-ում Տնօրենների Խորհրդի որոշմամբ հաստատված գնումների տարեկան համալիր ծրագրի ձևաթուղթը չի համապատասխանում 2017 թվականին հրապարակված գնումների պլանի ձևաթղթին,
2. հավելված №17-ում հղում է կատարված 2004 թվականի «Գնումների մասին» օրենքին,
3. հավելված №1-ում հղում է կատարված հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 7-ի №234 որոշմանը:

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել.

1. գնումների պլանը ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հանձնաժողովի Որոշմամբ սահմանված ժամկետում:

2. գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է PDF (փիդիէֆ) ֆորմատի ֆայլի տեսքով, մինչդեռ հանձնաժողովի Որոշման 13-րդ կետով (Որոշման փոփոխություն հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի №396Ա որոշում) սահմանված է, որ ընկերությունները տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը պետք է հրապարակեն XLS (իքսէլէս), XLSX (իքսէլէսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode տառատեսակով:

3. Բաց ընթացակարգով նախատեսված որոշ գնումների համար գնումների պլանում նշված գնման ձևերի կիրառման իրավական հիմքերը չեն համապատասխանում ընկերության կանոնակարգված գնումների կարգի դրույթներին:

Վերը նշվածից կարելի է փաստել, որ Ընկերության գնումների պլանի կազմման և հրապարակման գործընթացը ոչ միշտ է բխում հանձնաժողովի Որոշմամբ սահմանված պահանջներից:

4. Արզնի ՀԷԿ-ի №3 հիդրոագրեգատի նորոգման համար ընկերությունը նախատեսում է նույն եռամսյակում հայտարարել 2 բաց ընթացակարգով՝ տարբեր ծածկագրերով մրցույթ:
5. որոշ աշխատանքներ, որոնց ընդհանուր գինը գերազանցում է բաց մրցույթի կազմակերպման համար սահմանված նվազագույն շեմը, նախատեսվել է իրականացնել առանձին՝ բացառելով մրցույթի կազմակերպումը, մասնավորապես՝
   - Սևան ՀԷԿ-ի շենքի և այլ կառույցների նորոգում,
     Արզնի ՀԷԿ-ի կայանային հանգույցի շենքի նորոգում,
     Հրազդան ՀԷԿ-ի կայանային հանգույցի տարածքի և շինությունների նորոգում,
   - Արգել ՀԷԿ-ի ճնշումային խուցի և ՕԿԱ-ի նորոգում,
     Արգել ՀԷԿ-ի պատվարի նորոգում՝ ստորին բիեֆի հողալցում, մոտորիստի, թիկնապահի տարածքի վերանորոգում, հենասյան կոշտության, 6 հենասյուների, էստակադայի հատակի, հենասյուների նորոգում,
   - Հրազդան ՀԷԿ-ի դերիվացիայի նորոգում, ներառյալ՝ երկրորդական թեքություններ, հեղեղատարներ, ակվեդուկներ, ջրընդունիչ, ճնշումային խուց,
     Արգել ՀԷԿ-ի №4 ակվեդուկի կարերի նորոգում,
   - ինչպես նաև Սևան ՀԷԿ-ի №1 հիդրոագրեգատի նորոգում աշխատանքը ընկերությունը նախընտրել է իրականացնել առանձին, այնինչ բնույթով նման Հրազդան ՀԷԿ-ի №1 և №2, Արզնի ՀԷԿ-ի №3 կամ Քանաքեռ ՀԷԿ-ի №6 հիդրոագրեգատների նորոգման աշխատանքների հետ՝ որոնք իրականացվելու են բաց ընթացակարգով, միավորելու դեպքում, հնարավոր կլիներ տվյալ աշխատանքը նույնպես իրականացնել բաց ընթացակարգով:

Հարկ է նշել, որ 2016 թվականի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում հանձնաժողովի աշխատակազմի կողմից հայտնաբերվել էին մի շարք թերություններ, մասնավորապես.

1. գնումների պլանում ներկայացված չէին մրցույթով իրականացվող գնումների դեպքում՝ առանձին լոտերի անվանումները և գնման առարկաների հատկանիշները,
2. որոշ դեպքերում գնման առարկաները ներկայացված էին ընդհանրական կերպով, օրինակ՝ ապրանքների, գործիքների ձեռքբերում և այլն, և չէին արտացոլում կոնկրետ ապրանքների և գործիքների անվանումները,
3. ընկերությունը չկանոնակարգված գնումների մեջ տրոհել էր բնույթով նման որոշ աշխատանքներ, որոնց ընդհանուր գինը գերազանցում էր բաց մրցույթի կազմակերպման համար սահմանված նվազագույն շեմը՝ բացառելով մրցույթի կազմակերպումը:

Ընկերությունը նշված թերությունների վերացման ուղղությամբ փոփոխություններ է իրականացրել միայն 2-րդ կետում նշված թերությունների մասով, մասնավորապես՝ 2017 թվականի գնումների պլանում՝ «շենքերի, կառույցների և սարքավորումների շահագործման ծախսեր» բաժնում, «գործիքների ձեռքբերում» տողը ներկայացրել է «շահագործման և զննության համար անհրաժեշտ գործիքների ձեռքբերում» անվանմամբ: Առաջարկությունն հաշվի է առնվել մասնակի, քանի որ շահագործման գործիքները նույնպես անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս բացված անվանումներով՝ հնարավորություն տալով մասնակիցներին գնման առարկան ճշգրիտ ընկալելու:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

Առաջարկություն

Հաշվի առնելով նշվածը առաջարկում ենք.

1. վերահրապարակել գնումների պլանը «Միջազգային էներգետիկ կորպորացիա ՓԲԸ-ի պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում՝ հանձնաժողովի Որոշման 13–րդ կետով սահմանված ֆորմատներին համապատասխան, հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքներով ներկայացված թերությունները,

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգը համապատասխանեցնել գործող օրենքներին: Փոփոխված կարգը հանձնաժողով ներկայացնել՝ հանձնաժողովի Որոշման պահանջներին համապատասխան:

3. հաշվի առնելով հանձնաժողովի Որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 7-րդ կետը՝ համաձայն որի, գնումների կատարման նախընտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ձեռք բերվող գնման առարկաների անհարկի տրոհումից:

Հղումներ

1. Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №399Լ որոշում,

2. Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու և այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու մասին» №61Ա որոշում: